

человечества обсуждались на 29-ом (Сеул, 2000), 30-ом (Глазго, 2004), 31-ом (Тунис, 2008) и 32-ом (Кельн, 2012) конгрессах Международного Географического Союза.

GLOBAL PROBLEMS, CHANGES AND GEOGRAPHY

Y. H. Muradyan, PhD (geography), professor, ASPU

M. Y. Muradyan, PhD (geography), associate professor, ASPU

N. I. Samvelyan, PhD (geography), associate professor, ASPU

Keywords: *globalistics, global problems, global changes, geoinformatics, geosphere, biosphere, programme.*

Annotation: There are three major levels of the modern Geoglobalistics: global, regional and local. The ecologization, mathematization and socialization of Geographical Sciences are taking place. The Geoinformatics develops. “The Global Changes” geosphere-biosphere programme has a significant influence. The global problems of humanity were discussed during following international congresses of The International Geographical Union: 29nd (Seoul, 2000), 30nd (Glasgow, 2004), 31st (Tunis, 2008) and 32nd (Cologne, 2012).

ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ն. Ա. Հարությունյան, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

narek77@bk.ru

Բանալի բառեր. անտառ, անտառոտնտեսություն, անտառկառավարում, անտառօգտագործում, վերարտադրություն, կենսաբազմազանություն:

Անտառը՝ բազմամյա ծառային բուսականության և անտառբուսական միջավայրը կազմող այլ փոխկապակցված բաղադրիչների բարդ ամբողջություն է: Դրանք ոչ միայն ֆլորայի ու ֆաունայի ողջ կենսաբազմազանության կենսապահովման պայմաններն են ապահովում, այլ նաև ազդում են ամբողջ շրջակա միջավայրի վրա (այդ թվում ջրաբանական ռեժիմի, մթնոլորտի կազմի, միկրոկլիմայի, հողերի, լանդշաֆտների և այլն) և ձևավորում բարդ բնահասարակական երկրահամակարգեր:

Տնտեսական իմաստով անտառները, ինչպես և դրանցով զբաղեցված հողատարածքը, կապիտալի և աշխատանքի հետ մեկտեղ արտադրության երրորդ գործոն են հանդիսանում, լինելով անտառոտնտեսության համար հիմնական և անփոխարինելի արտադրության միջոց:

Անտառի ծառայությունները և ռեսուրսները բազմազան են. Դրանց թվին են պատկանում ծառային, տեխնիկական, սննդային, կերային, դեղաբույսային, ջրային և այլ ռեսուրսներ, իսկ ոչ նյութական ծառայությունների թվին՝ սոցիալական, պաշտպանական, մշակութային և այլն:

Պատմության սկզբնական շրջաններում անտառի գերակշռող ռեսուրսը՝ բնափայտն էր, որպես շինարարական և վերամշակման հումք: Հետագայում էկոլոգիական և սոցիալական ճգնաժամերի խորացման հետ մեկտեղ անտառների նշանակությունն ընդլայնվեց որպես համամոլորակային մասշտաբներ ունեցող անփոխարինելի բնապաշտպան գործոնի, որը բարելավում է շրջակա միջավայրը, մարդկանց կյանքի որակը: Անտառային ռեսուրսների բազմազանությունը պայմանավորել է դրանց բազմանպատակային օգտագործումն ու համապատասխան տնտեսության ճյուղերի զարգացումը:

Ի տարբերություն անտառից, որպես հիմնական արտադրական միջոցի, դրա ռեսուրսներն ու ծառայություններն անտառտնտեսության աշխատանքի արդյունքներ են հանդիսանում: Ըստ բնույթի դրանք բաժանվում են շուկայական և ոչ շուկայական ռեսուրսների: Առաջինները յուրաքանչյուր առանձին սպառողի պահանջարկն ունեն և օժտված են արժեքով: Իսկ երկրորդները՝ անբաժանելի հասարակական բարիքներ են. Սոցիալական, պաշտպանական, մշակութային ծառայությունները:

Անտառօգտագործումն՝ անտառի նշված վերարտադրվող բարիքների ու ծառայությունների օգտագործումն է: Անտառտնտեսությունը՝ բացի անտառօգտագործումից նախատեսում է նաև միջոցառումների համակարգի միջոցով պահպանել անտառները հրդեհից, վնասատուներից և հիվանդություններից, ապահովել անտառների ռացիոնալ օգտագործումն ու վերականգնումը և այլն:

Ազգային տնտեսության ցանկացած ճյուղ ունի իր յուրահատկությունները, որոնք պահանջվում է հաշվի առնել դրանց արդյունավետ գործունեությունը կազմակերպելու համար: Անտառային տնտեսության գլխավոր առանձնահատկությունը, որը տարբերում է այն տնտեսության այլ ճյուղերից, անտառների աճեցման երկարատև ժամանակամիջոցն է, որը հաշվարկվում է տասնյակ, իսկ որոշ արժեքավոր տեսակների համար հարյուրավոր տարիներով: Այդ ժամանակահատվածը կոչվում է անտառի հասունության տարիք և հաշվարկվում է հատումների շրջանառության հիման վրա: Օրինակ, փշատերևների համար այն կազմում է ` եղևնուն 80-ից 120 տարի, մայրին՝ 160-ից 240, իսկ լայնատերևներից՝ կաղնու համար կազմում է 240-ից 360 տարի [1]: Այդ յուրահատկությունն առաջ քաշեց մի շարք երկրների օրենսդրական մակարդակներում անտառի անընդհատ կայուն օգտագործման պահանջը, որը ենթադրում է անտառի ռեսուրսների օգտագործման մասշտաբների գույակցումը դրանց վերականգնման տեմպերի հետ:

Երկրորդ յուրահատկությունը՝ անտառների բազմանպատակային բնույթն է, որը որոշում է անտառտնտեսության կազմակերպման նոր փուլ հանդիսացող անտառների բազմառեսուրսային կառավարման սկզբունքը: Բազմառեսուրսային անտառկառավարման էությունը կայանում է նրանում, որ անտառի ցանկացած ռեսուրսի օգտագործումն ու վերարտադրությունն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով անտառտնտեսության ամբողջ համալիրի փոխկապակցված տարրերը:

Կայուն բազմառեսուրսային անտառկառավարման կազմակերպումն առաջ է քաշում համապատասխան տնտեսական և իրավական մեխանիզմի հիմնավորման ու իրականացման խնդիրը:

Անտառտնտեսության ճյուղային յուրահատկությունը հաշվի առնող անտառների տնտեսությունն ու կառավարումը սերտորեն փոխկապակցված են: Կառավարմանը ներկայացվող գլխավոր պահանջը՝ անտառի ռեսուրսների ու ծառայությունների կայուն օգտագործման ապահովումն է, ինչը հնարավոր է միայն դրանց վերարտադրման երաշխիքների դեպքում գոնե դրանց պարզ անփոփոխ մասշտաբի մակարդակում: Դա իր հերթին հնարավոր է միայն եթե իրականացվեն միջոցառումների համակարգ, որը համապատասխանում է ձևավորվող անտառների նպատակային նշանակությանը և կազմին, իչպես նաև նորմալ վերաճի պայմաններին: Քանի որ անտառը աշխարհագրական հասկացություն է, որը արտացոլում է դրա հիմքի գոտիական-տիպոլոգիական առանձնահատկությունները, ապա անտառի կայուն կառավարման կազմակերպման պարտադիր պայման պետք է լինի անտառտնտեսական միջոցառումների ռեզիոնալ համակարգերի հիմնավորումը: Դա

անհրաժեշտ է, քանի որ ներկայումս գործնականում հաճախ բացակայում է անտառտնտեսվարման համակարգված լինելը, ինչը իջեցնում է դրա արդյունավետությունը:

Անտառների բազմանպատակային օգտագործման պահանջն առայժմ հանգեցվում է միայն անտառների առանձին կատեգորիաների առանձնեցմամբ, ընդ որում չեն ապահովվում անտառտնտեսության վարման համապատասխան նպատակներին ծառայող համակարգերը: Շատ երկրներում՝ նույն տարածքներում տեղակայված անտառները կարող են տարբեր նպատակների ծառայել, և այստեղ խնդիր է դրվում ոչ թե նպատակները միմյանց հակադրել, այլ ենթարկեցնել մեկը մյուսին՝ հաշվի առնելով առաջնայնության սկզբունքը: Այդպիսի մոտեցման համար անհրաժեշտ է մշակել անտառօգտագործման ինտեգրացված միջոցառումների համակարգ, որը հնարավոր է իրականացնել տարածքի լանդշաֆտային պլանավորման միջոցով:

Դեպի կայուն անտառօգտագործում անցումը ենթադրում է անտառային տնտեսության բազմառեսուրսային պլանավորում և կառավարում: Անտառի չմտածված պահպանությունը հանգեցնում է դենդրոֆլորայի գերծերացմանը, վնասատուների և հիվանդությունների օջախների տարածմանն ու հողմնափլուզումներին:

Դրա հետ մեկտեղ անտառօգտագործման ձևավորված կարգը, որը կողմնորոշված է միայն մեկ տեսակի բնափայտի պաշարմանը, անվերականգնելի վնաս է հասցնում ոչ բնափայտային բուսականության և ծոայությունների վերարտադրությանը: Արդյունքում վերանում է ենթանտառը, փոփոխվում է ջրաբանական ռեժիմը, աղքատանում է ֆլորայի և ֆաունայի բազմազանությունն ու ամբողջ բնական էկոհամակարգը:

Անտառտնտեսության կառավարմանը ներկայացվող կրևոր պահանջներից է դրա հուսալի պահպանության կազմակերպումը հրդեհներից, գողություններից և այլ անտառի ռավախատումներից: Այս պահանջն անհրաժեշտ չափով իրականացված չէ, այն դեպքում, երբ դրա թերագնահատումն իջեցնում է անտառտնտեսության ծախսերի արդյունավետությունը: Ապօրենի հատումների միջոցներն անտառկառավարման ամբողջ բնույթի փոփոխություն են պահանջում, ինչպես նաև տնտեսական պատժամիջոցներ և իրավական նորմեր, ծախսերի համապատասխան պլանավորում, օպտիմալ տարբերակների ընտրության համար արդյունավետության գնահատում: Նույնը վերաբերվում է ոչ բնափայտային, այդ թվում կերային ռեսուրսների չկառավարվող օգտագործմանը:

Բնափայտի պաշարների կուտակման և անտառտնտեսական միջոցառումների նախապատրաստման հիմնական ծավալի հետ կապված աշխատանքներն ունեն սեզոնային բնույթ, ինչը զգալի չափով արտացոլվում է տեխնիկայի և աշխատանքային ռեսուրսների կիրառման և ֆինանսական միջոցների օգտագործման վրա: Անտառօգտագործման միջոցառումների սեզոնայնության պայմաններում, արտադրության արդյունավետ կազմակերպման համար պահանջվում է անտառային ճյուղերի և տնտեսության հարակից ճյուղերի արտադրությունների զուգակցման մանրամասն պլանավորում՝ հաշվի առնելով անտառային գործի համաչափության, ռիթմայնության և որպես հետևանք արդյունավետության բարձրացումը:

Անտառօգտագործման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել ոչ միայն տնտեսական հաշվապահություն, այլ նաև էկոլոգիական հաշվապահություն վարել: Մեծ կարևորություն է տրվում բնական միջավայրում նյութի և էներգիայի հաշվեկշռի որոշարկմանը մինչև անտառաշահագործումն ու անտառաշահագործումից հետո: Օրինակ, հատումների կարճ շրջապտույտների ժամանակ, հատկապես արագաճ տեսակների դեպքում, ծառահատումից

հետո հողից հեռացվում են աննդարար տարրերը, նկատվում է հողի բերրիության անկում: Բերրիության վերականգնման համար պահանջվող ծախսերը նույնպես պետք է հաշվի առնել շահույթի գնահատման ժամանակ:

Կասկածելի է ընդունվող և իրականացվող միջոցառումներից անտառներին հասցվող կամ սպասվող վնասի տնտեսական գնահատման ժամանակ այնպիսի հաշվարկման մեթոդի կիրառումը, ինչպիսին է դիսկոնտավորումը: Անտառտնտեսության մեջ որոշումներ ընդունելու ազատությունը սահմանափակ է՝ կապիտալի առավելագույն շահութաբերությունը կազմում է 3%, իսկ միջինը՝ 0,5%-ից 1% իջեցման միտումով [2]:

Իմանալով պահպանման ենթակա տարածքի կենսաբազմազանության էկոլոգիական որմնախորշը, անհրաժեշտ է ձևավորել անտառներ, որոնք կհամապատասխանեն շրջակա միջավայրի պայմաններին: Հայտնի է, որ հրդեհների, վնասատուների, հիվանդությունների նկատմամբ առավել կայուն են, ֆաունայի համար առավել բարենպաստ են և միջավայրաստեղծ առավել մեծ օգտակարություն ունեն խառը, բազմատարիքային անտառները: Մասնավորապես դրանք տեղայնացնում են այսպես կոչված «արմատային սպունգը», որը մինիմալ թույլատրելի սահմանի վրա է պահում անտառի շատ վնասատուների և ավելի անվտանգ է հրդեհի առաջացման տեսանկյունից: Օրինակ, հայտնի են կաղնու անտառների մեծ կորուստները դրանց կառուցվածքների պարզեցման պատճառով:

Կայուն անտառը պետք է օժտված լինի համապատասխան ենթակառուցվածքով՝ ճանապարհային ցանցով, հակահրդեհային և անտառպաթոլոգիական ծառայություններով, իրականացվի մոնիթորինգ, ունենա տնկարան և այլն: Իսկ դա իր հերթին ժամանակին իրականացվող վերարտադրություն կամ նորացում է պահանջում: Վերարտադրության խախտումը հանգեցնում է անտառային ողջ համակարգի փլուզմանը: Հրդեհներն ու վնասատուների օջախները՝ ժամանակին չձեռնարկված միջոցառումների հետևանքով առաջացած նույն վթարներն ու աղետներն են: Այդ իսկ պատճառով անտառների և անտառային տնտեսության բնագավառում ձևավորվում են նոր տնտեսական հարաբերություններ, որոնք կոչված են կանխարգելելու անտառներին, բնությանը, մարդկանց հասցվող վնասը: Այսպիսով, անտառներում տնտեսվարումը /անտառային տնտեսությունը, անտառի բոլոր ռեսուրսների ու ծառայությունների շահագործման համակարգը/ պետք է ընդգրկի ոչ միայն ծախսերի ու եկամուտների վերլուծությունն ինչպես մինչ այժմ էր արվում, այլ նաև ծախսերում հաշվի առնվող բոլոր վնասների գծով հողվածները: Ընդ որում ծախսերի ու եկամուտների վերլուծությունը կպահանջի որոշումներ ընդունելու տվյալների բազայի ընդլայնում, այդ թվում այլընտրանքների ձևավորման և դրանցից ամենաարդյունավետի ընտրության համար, որոնք կհամապատասխանեն ոչ միայն տնտեսական, այլև էկոլոգիական, սոցիալական և հոգևոր պահանջումներին:

Ըստ անտառային տնտեսության մեջ վերարտադրության գործընթացի արտահայտման ձևերի, տեսաբանների կարծիքները բաժանվում են անտառային ռենտայի և հողային ռենտայի կողմնակիցների: Այդ երկու տեսակետների հակադրությունն արդեն մեկ ու կես հարյուրամյակից ավելին է շարունակվում: Այդպիսի տարաձայնության պատճառը բացատրվում է անտառային ռեսուրսների վերարտադրության մոդելների նկատմամբ հայացքների տարբերությամբ:

Անտառային ռենտայի կողմնակիցները վերարտադրությունը ներկայացնում են անտառի անընդհատ կայուն մասհանման հիման վրա, որը անտառային տնտեսությանը ներկայացվող կարևորագույն պայմանն է: Անտառային ռենտան՝ հիմնվում է բավականաչափ

խոշոր անտառային տեղամասերի վրա, որն ապահովում է կայուն մասհանման կազմակերպումը: Սա օրենսդրական հիմքերով ամրագրված է աշխարհի շատ երկրներում:

Հողային ռենտայի կողմնակիցները վերարտադրության իրենց մոդելը կառուցում են անտառի ժամանակ առ ժամանակ օգտագործման հիման վրա, այսինքն անտառի միանվագ հատում հատման ամբողջ շրջապտույտի ընթացքում: Հողային ռենտան՝ հիմնվում է անտառի մի որոշ տեղամասի վրա, որտեղ կայուն մասհանումը կազմակերպելն անհնար է: Այս հիմնադրույթը պատմականորեն առաջացել է մանր մասնավոր անտառների համար /մի քանի հեկտարից մինչև մի քանի տասնյակ հեկտարներ/, որոնք գերակշռում էին կապիտալիզմի սկզբնական փուլերում և երբ դեռ չկային XX դարի երկրորդ կեսին առաջացած մասնավոր անտառների ասոցիացիաները:

Երու դեպքում էլ կապահանջվի ժամանակ նոր կայուն մասհանման մակարդակ ստեղծելու կամ եղածը նորով փոխարինելու համար, ինչը և ապահովում է անտառային ռեսուրսների ընդլայնված վերարտադրությունը: Անտառի կայուն մասհանման կազմակերպումը կապահովվի 1-ից մինչև 10 տարի տարիքային շարքի ձևավորման ավարտին: Տնկիների այդպիսի տարիքային շարքը կոչվում է կայուն մասհանվող անտառ /ԿՄԱ/: Տերմինը պատմականորեն առաջացել է Գերմանիայում Բերենտորնյան անտառների շուրջ բանավեճի ընթացքում, որի հիման վրա առաջացել է «դաուերվալդի» հիմնադրույթը: Այդ բանավեճն ամփոփելով ռուս գիտնական Մ.Ս.Օրլովը եկել է այն եզրահանգման, որ այդպիսի ԿՄԱ անտառը հատուկ է տնտեսվարման բոլոր ձևերին. ինչպես համատարած, այնպես էլ ոչ համատարած /ընտրովի/ հատումներին:

Այսպիսով, ԿՄԱ-ն հանդիսանում է անտառտնտեսության հիմնական և անփոխարինելի արտադրամիջոցը, առանց որի հնարավոր չէ կազմակերպել կայուն մասհանում: Այն միասնական ձևով ընդգրկում է և հողը, և դրա վրա աճող ծառը, այդ թվում նաև անտառային էկոհամակարգը կազմող այլ բաղադրիչները, կամ այսպես կոչված անտառային կենսաերկրահամակեցությունը: ԿՄԱ-ի որպես արտադրամիջոցի օգտագործման հիման վրա ստացվող գուտ եկամուտը կախված է ռեսուրսի որակից ու անտառային շուկայի նկատմամբ տեղադրվածությունից և կոչվում է անտառային ռենտա: Ընդ որում հողային ռենտան կազմում է անտառային ռենտայի 1/10-ից մինչև 1/5 մասը, ինչն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ հենց անտառային ռենտան և ոչ թե հողային ռենտան է որոշիչ հասունության տարիքի համար, որը և որոշվում է ըստ առավելագույն հնարավոր ռենտայի առաջացման ժամանակի որպես տարեկան մեկ հեկտարից միջինը մեկ հատման շրջապտույտից ստացվող անտառային գուտ եկամուտ:

Անտառային ռենտան անտառտնտեսության կենտրոնական ցուցանիշն է հանդիսանում: Այն որոշում է [2].

- անտառային ռեսուրսների դիմաց վճարների մեծությունը,
- տնտեսության շահութաբերությունը,
- անտառային եկամուտը,
- անտառային տնտեսության ֆինանսավորման աղբյուրները,
- անտառի տնտեսապես մատչելի ռեսուրսները,
- անտառների արժեքը կապիտալացման միջոցով,
- բոլոր անտառօգտագործողների աշխատանքի հավասար պայմանները:

Անտառի ռեսուրսների դիմաց վճարները ընդգրկում են երկու բաղադրամասեր.

- օգտագործվող անտառի վերարտադրության վճարը,

- անտառային ռենտան կամ գուտ եկամուտը:

Ընդ որում, անտառային ռենտան իրենից ներկայացնում է մնացորդային արժեք որպես ձեռնարկատիրոջ կողմից չվաստակած գերշահույթ վերջնական արդյունքի գնից հանած ամբողջ տեխնոլոգիական շղթայի ծախսերը, սկսած ռեսուրսի աճեցումից մինչև սպառման շուկայում դրանց իրացումը՝ այդ թվում նաև նորմատիվային շահույթը և տրանսպորտային ծախսերը:

Այս կամ այն տնտեսության իրավասության տակ գտնվող անտառային զանգվածներն իրենցից ավարտված և անավարտ կայուն մասհանման անտառների մեծ ամբողջություն են ներկայացնում, որոնք կախված են անտառների բազմազանությունից և դրանց նպատակային նշանակությունից: Դրանց կառավարման նպատակով մշակվում են անտառային ռեսուրսների օգտագործման ու վերարտադրության տարբեր մակարդակների ծրագրեր, սակայն անհրաժեշտ է ի նկատի ունենալ դրանց ծախսերի տարբեր բնույթը /ընթացիկ և կապիտալ/, որոնք ինչպես պլանավորման, այնպես էլ տնտեսական գնահատման ժամանակ չի կարելի շփոթել:

Նշենք, որ ֆինանսական հասունության մասին հիմնադրույթում անտառային տնտեսության մեջ իրականացվող բոլոր ծախսերը վերաբերվում են միայն ներդրումներին, որն ինքնին արդեն անհեթեթություն է, քանի որ տարիքի երկարատև ժամանակահատվածը ավելի քան այլ ճյուղերում սահմանափակում է անտառային տնտեսության մեջ ներդրումների կատարումը: Մասնավոր, հատկապես մանր, անտառուեփականատերերը, որոնք կարծես թե պետք է լինեն հողային ռենտայի կողմնակիցներ, շահագրգռված չեն անտառի մեջ ինվեստիցիաներ կատարել, և ինչպես վկայում է ԱՄՆ, Ֆինլանդիայի և այլ երկրների փորձը, միայն պետությունն իր դոտացիաների և արտոնյալ վարկավորման միջոցով դրդում է սեփականատերերին իրենց անտառների բարելավմանը և արդյունքայնության բարձրացմանն ուղղված ինվեստիցիաներ կատարել:

Գրականության ցանկ

1. Սայադյան Հ.Յա., Հայաստանի Հանրապետության անտառային գեոհամակարգերի տարածաժամանակային փոփոխությունները և կառավարման հիմնախնդիրները, ԵՊՀ, 2010.261 էջ:
2. Экономика природопользования: учеб./под ред. К.В.Папенова.-М., ТЕИС, ТК Велби, 2008. - 928 с.

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ЛЕСАМИ

Н. А. Арутюнян - к.г.н., доцент, ЕГУ

Ключевые слова: *лес, лесное хозяйство, управления лесами, лесопользование, воспроизводство, биоразнообразие.*

Аннотация. Многообразие функций леса и его универсальная ценность для многих видов деятельности приводят к возникновению крайне противоречивых интересов по поводу его использования, что требует объективной оценки приоритетов лесопользования (экономических, социальных, экологических) и механизмов их реализации. Глобальный характер проблем, связанный с сохранением и использованием лесов, обусловил их международное признание и разработку концепции устойчивого управления лесами, являющейся ориентиром для формирования политики национальных лесных ресурсов,

которая поддерживает общепринятые принципы сбалансированного природопользования на основе устойчивого управления лесами.

CONTEMPORARY PROBLEMS OF FOREST MANAGEMENT

N.A.Harutyunyan, PhD (Geography), associate professor, YSU

Keywords: *forest, forestry, forest management, forest use, reproduction, biodiversity.*

Annotation: The diversity of forest functions and its universal value for many types of activities cause the emergence of highly conflicting interests regarding its use, which requires an objective assessment of forest use priorities (economic, social, environmental) and mechanisms for their implementation. The global nature of the problems associated with the conservation and use of forests has led to their international recognition and development of the concept of sustainable forest management, which is a guide for the formation of national forest policies, which supports the adopted principles of balanced nature management based on sustainable forest management.

ՀՀ ՄԱՀՄԱՆԱՍԵՐԶ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԱՐԱԾՍՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վ.Ա. Պոտոսյան, ասպիրանտ, ԵՊՀ

v.potosyan@ysu.am

Բանալի բառեր. սահմանամերձ տարածքներ, սահմանամերձ բնակավայրեր, բնակչության տարիքային կառուցվածք, տարիքային հիմնական խմբեր, բնակավայրերի մարդաքանակ, հիմնախնդիրներ:

Աշխարհաքաղաքական ներկա իրավիճակով պայմանավորված, սահմանամերձ տարածքների և երկրի պաշտպանունակության ամրապնդումը կենսական նշանակություն ունի: Բացի այդ, ՀՀ կառավարության կողմից ներկայումս տարվող տարածքային համամասնական զարգացման քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկը սահմանամերձ և այլ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում բնակչության թվի նվազման կանխարգելումն ու աճի խթանումն է [4]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ սահմանամերձ բնակավայրերը հիմնականում գյուղեր են, իսկ դրանց հեռանկարային զարգացումը, ի թիվս բազմաթիվ այլ գործոնների, մեծ չափով կախված է նաև բնակավայրերի մարդաքանակից ու բնակչության տարիքային կառուցվածքից, արդիական խնդիր է սահմանամերձ գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքի վերլուծությունը, տարածաշրջանային առանձնահատկությունների ու հիմնախնդիրների բացահայտումը:

ՀՀ-ում սահմանամերձ համարվող 175 համայնքների վարչական տարածքը կազմում է մոտ 6182 կմ² (երկրի տարածքի 20,8%-ը): Իսկ «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» օրենքով հաստատված սահմանամերձ գոտին՝ պետական սահմանից ցամաքի խորքը 5 կմ լայնությամբ շերտը, զբաղեցնում է 7155 կմ² տարածք կամ երկրի տարածքի 24%-ը [առավել մանրամասն տես թիվ 1 գրականությունը]: Սահմանամերձ բնակավայրեր կան ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ արտաքին սահման չունեցող Կոտայքի մարզի: 2015թ. դրությամբ սահմանամերձ 188 գյուղական բնակավայրերում ապրում էր հանրապետության գյուղական բնակչության 12,6%-ը [3]: